

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

11 հունիսի 2014 թվականի

թիվ 11/11

քաղ. երեւան

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմիններում
մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ ապրանքների
ճշգրիտ դասակարգման հսկողության միասնական մեթոդիկայի ներդրման
վերաբերյալ առաջարկների եւ դրա հեռանկարների զարգացման մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման
վերաբերյալ որոշումների տեղեկատուի կառուցվածքը (կցվում է):

2. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի
Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին եւ Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ նախատեսել
տեղեկատվության առկայություն՝ Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային մարմինների կողմից կիրառվող ծրագրային միջոցներում՝ Ըստ ՄՄ
ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի
հաստատված կառուցվածքին համապատասխան:

3. Ռուսաստանի ԴՄԾ-ին Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի եւ
Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի հետ համատեղ՝ 2015 թվականի 1-
ին եռամսյակում Մաքսային միության անդամ պետությունների միավորված

կոլեգիայի ընթացքում ներկայացնել Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի ձեւավորման եւ կիրառման կանոնակարգի նախագիծը:

Նախագահի տեղակալ՝

Ա.Ֆ. Շախլեակի

Նախագահի տեղակալ՝

Գ.Կ. Ամրին

Ռուսաստանի ԴՄԾ-ի ղեկավարի
առաջին տեղակալ՝ Միավորված
կոլեգիայի անդամ՝

Վ.Մ. Մալինին

Հավելված

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 11/11 որոշման

Ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների տեղեկատուի կառուցվածքը

Ապրանքի ծածկագիրը՝ նշված	Ապրանքների մասին հայտարարագրի էլեկտրոնային պատճենի ֆայլը	Ապրանքի ծածկագիրը՝ ճշգրտված	Ըստ դասակարգման որոշման տեսաներածված (սկանավորված) պատճենը**	Ապրանքի առետուրային անվանումը	Ապրանքի դասակարգման հատկանիշները, որոնք ազդում են ըստ դասակարգման որոշումն ընդունելու վրա	Ապրանքի բնութագրերը, որոնք անհրաժեշտ են արտացոլել ակտում մաքսային տեսազննում կամ զննում անցկացնելիս**	Ապրանքի գրաֆիկա- կան պատկերը պարունա- կող ֆայլ**	Մաքսային փորձաքննու- թյուն նշանակելու դեպքում մաքսային փորձագետին ներկայացվե- լիք հարցերը*	Փորձագետի եզրակա- ցության տեսաներած- ված պատճենը**	Դատական պրակտիկա*	Դատա- րանի վճռի տեսանե- րածված պատ- ճենը**	Լրացու- ցիչ տեղեկատ- վություն*
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

1. Նշվում է ապրանքի՝ ապրանքների մասին հայտարարագրում նշված ծածկագիրը:
2. Վանդակը պարունակում է ապրանքների մասին հայտարարագրի էլեկտրոնային պատճենի ֆայլը:
3. Նշվում է ապրանքի ծածկագիրը՝ ըստ դասակարգման վերաբերյալ որոշման:

4. Վանդակը պարունակում է դասակարգման վերաբերյալ որոշման տեսաներածված պատճենը:
5. Նշվում է ապրանքի՝ ապրանքների մասին հայտարարագրի 31-րդ վանդակում նշված առետրային (կոմերցիոն) անվանումը:
6. Նշվում են դասակարգման վերաբերյալ որոշումից ապրանքների բնութագրերը:
7. Նշվում են ապրանքների բնութագրերը (հատկանիշները), որոնք անհրաժեշտ են սահմանել՝ մաքսային զննում կամ տեսազննում անցկացնելիս:
8. Վանդակը պարունակում է ապրանքի գրաֆիկական պատկերով ֆայլ:
9. Մաքսային փորձաքննություն նշանակելու դեպքում նշվում են մաքսային փորձագետին ներկայացվելիք հարցերը:
10. Վանդակը պարունակում է փորձագետի եզրակացության տեսաներածված պատճենը:
11. Նշվում են ապրանքների վերաբերյալ դատական վճիռների համարներն ու ամսաթվերը:
12. Վանդակը պարունակում է դատարանի վճռի տեսաներածված պատճենը:
13. Նշվում է լրացուցիչ տեղեկատվությունը եւ (կամ) հատկանիշն այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից Տեղեկատու են մուտքագրվում այլ տեղեկություններ, որոնք կարելի է անհրաժեշտ էն ապրանքների դասակարգման ճշգրտության նկատմամբ հսկողության համար, օրինակ՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների մասին: Նախնական որոշման մասին տեղեկատվությունը նշելու դեպքում Տեղեկատուն լրացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները՝ 1-ին վանդակում նշվում է նախնական որոշում

կայացնելու մասին դիմումից ապրանքի ծածկագիրը (տեղեկատվության առկայության դեպքում). 3-րդ վանդակում նշվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 6-րդ վանդակից ապրանքի ծածկագիրը. 5-րդ վանդակում նշվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 5-րդ վանդակից ապրանքի անվանումը. 6-րդ վանդակում նշվում են ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման 7-րդ վանդակից ապրանքի բնութագրերը. 4-րդ վանդակը կարող է պարունակել ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման տեսաներածված պատճենը:

* Տվյալ դաշտը լրացվում է տեղեկատվության առկայության դեպքում

** Տվյալ դաշտը լրացման համար պարտադիր չէ